2.5 Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնական կառույցն իրականացրած անձանց կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdзор@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 367-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԶԻՎԱՆ ԶԱՆԻԲԵԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ
ԸՆՏԱՆԻՔԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,075546ՀԱ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ
գբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի
պահանջներով, **որոշում եմ՝**

Ճանաչել Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական
տարածքում գտնվող, Զիվան Զանիբեկի Մարտիրոսյանի, Հերիք Մարկոսի
Ղազարյանի, Հրանտ Զիվանի Մարտիրոսյանի և Լուսիա Զիվանի
Մարտիրոսյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0,075546 հա
(ծածկագիրը՝ 10-004-0057-0004, գործառնական նշանակությունը՝ բնակելի
կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասի
սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 368-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 27-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը և քաղաքացու դիմումը, **որոշում եմ՝**

- Արենի համայնքի Ելփին բնակավայրի 27-րդ փողոց, թիվ 25 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-020-0074-0015, հողամասի չափը՝ 0.12321 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Արմիկ Ալբերտի Բադալյանին, Նարինե Թորոսի Բադալյանին, Սերգեյ Արմիկի Բադալյանին, Գառնիկ Արմիկի Բադալյանին և Սիրարփի Արմիկի Բադալյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 139,3քմ. (բնակելի տուն կ/ն՝ 37քմ., աստիճանավանդակ՝ 6,2քմ., բնակելի տուն 1-ին հարկ՝ 93,8քմ. բաց պատշգամբ՝ 2,3քմ.) ճանաչել օրինական:
- Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2023WTG2KB:
- Առաջարկել կառույցն իրականացրած Արմիկ Բադալյանին և մյուսներին վճարելու 1 քմ.՝ 743 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան համար՝ ընդամենը 103 500 (մեկ հարյուր երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

4. Ինքնակամ կառույցի օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355105066:
5. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
6. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdзор@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 369-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 29-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը, **որոշում եմ՝**

- Արենի համայնքի Արենի բնակավայրի 29-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-008-0015-0004, հողամասի չափը՝ 0.12295 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Իշխան Արշավիրի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված կիսակառույց բնակելի տունը՝ 91քմ.՝ ճանաչել օրինական:
- Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 20235WAAMP:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կիսակառույց բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները ճեն գանձվում:
- Կիսակառույցը ավարտին հասցնելու նպատակով Իշխան Նազարյանին սահմանված կարգով տրամադրել նախագծման թույլտվություն: Նախագծման թույլտվության հերթական համարն է N 76:
- Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 370-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի պահանջով՝ **որոշում եմ.**

2023 թվականի ընթացքում Արենիի համայնքապետարանի կողմից իրականացվող նախաձեռնություններին և համայնքային կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար Արենի համայնքի բնակիչ հանդիսացող, սույն որոշման թիվ 1 հավելվածում նշված անձանց պարգևատրել շնորհակալագրերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՑԱՆԿ		
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԾՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ		
Հ/Հ	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
1	Ագարակաձոր	Վարդան Վարդանյան
2		Անդրանիկ Գալստյան
3		Նախշուն Բեգլարյան
4		Գեղամ Աբրահամյան
5	Աղավնաձոր	Արտավազ Գրիգորյան
6		Դավիթ Հակոբյան
7		Արմեն Բեգլարյան
8		Արայիկ Գրիգորյան
9		Գագիկ Կարապետյան
10		Հայկ Հակոբջանյան
11		Արտյոմ Հախվերդյան
12		Արթուր Խրայեյան
13		Արսեն Շահինյան
14	Արենի	Թորոս Պետրոսյան
15		Արթուր Մկրտչյան
16		Սամվել Պետրոսյան
17		Արշավիր Մարտիրոսյան
18	Արփի	Նարինե Համբարձումյան
19		Ալիկ Գյուլիջանյան
20		Սարգիս Մաթևոսյան
21		Արշավիր Պողոսյան
22	Ելփին	Գեղամ Ալավերդյան
23		Հայկ Պողոսյան
24		Ռոման Չոիրաբյան
25		Արմեն Մանուկյան
26	Խաչիկ	Սերյոժա Սարգսյան
27		Տոնիկ Հովհաննիսյան
28		Չավեն Գրիգորյան
29	Չիվա	Նարեկ Հարությունյան
30		Ավետիս Ավետիսյան
31		Վաղինակ Ավետիսյան
32		Կարեն Սարգսյան
33	Ռինդ	Արծրուն Ավետիսյան
34		Ավետիք Խաչատրյան
35		Հովհաննես Ասատրյան
36		Նորայր Վարդանյան

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐՏՈՒՂԱՐ՝



ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdзор@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 371-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ
ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՆԵՐՔԻՆ
ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎԵԼՈՒ
ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների ներքին գործավարության կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություններին առնչվող պաշտոնների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԳ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների (այսուհետ՝ «Ծառայողական օգտագործման համար») նշումով ներքին գործավարության կազմակերպումն ու իրականացումը:

2. «Ծառայողական օգտագործման համար» (այսուհետ՝ «ԾՕՀ») նշումով տեղեկությունների ներքին գործավարությունը կազմակերպում է Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ՀԿՏՀ) միջոցով:

3. Համակարգում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է «ՂԷԱ Գրապալատ» (GHEA Grapalat) կամ «ՂԷԱ Մարիամ» (GHEA Mariam) տառատեսակներով:

4. Համակարգում փաստաթղթերի վավերացումն իրականացվում է էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման միջոցով բացառությամբ այն մարմինների, որտեղ ներդրված չէ համակարգը կամ ժամանակավորապես չի գործում:

5. Էլեկտրոնային ստորագրության վավերության դեպքում փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը համարժեք է թղթային տարբերակին: Օգտվողի անունով Համակարգում կատարված ցանկացած մակագրություն (նշագրում, գրառում) համարժեք է փաստաթղթի վրա կատարած մակագրությանը (նշագրմանը, գրառմանը):

II. ԾՕՀ ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ

6. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների շրջանակը սահմանափակ է՝ տեղեկությունների արտահոսքն ու հրապարակումը բացառելու նպատակով:

7. Քարտուղարությունում «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների շրջանակը որոշում է Քարտուղարը՝ կախված աշխատանքների ծավալից:

8. Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար իր ստորաբաժանումից առաջադրում է «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների տվյալներ, որը հաստատում է համայնքի ղեկավարը:

9. Համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար կազմից «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնները որոշում է համայնքի ղեկավարը:

10. Յուրաքանչյուր ստորաբաժանման «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառության կազմակերպման, վարման և սահմանված ժամկետներում կատարման համար պատասխանատու է տվյալ ստորաբաժանման ղեկավարը:

11. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնատար անձանց փոփոխության դեպքում ստորաբաժանումների ղեկավարները եռօրյա ժամկետում տեղեկացնում են Քարտուղարին:

12. «ԾՕՀ» նշումով գրությունների՝ սահմանված ժամկետում կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Քարտուղարը կամ իր լիազորմամբ համապատասխան օպերատորը, որը պարբերաբար Քարտուղարին է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն:

III. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՄՏԻՅ ԵՎ ԵԼԻՅ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

13. Համայնքապետարանի աշխատակազմում «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 13.01.2020 թվականի «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներքին գործավարության կարգը հաստատելու մասին»

թիվ 05-Լ հրամանով սահմանված կարգին համապատասխան:

14. Համակարգի «Վերնագիր» բաժնում, ինչպես նաև «ԾՕՀ» նշումով մտից և ելից փաստաթղթերի վերին աջ անկյունում կատարվում է «ԾՕՀ» գրառումը:

IV. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ «ԾՕՀ» ՆՇՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄԸ

15. «ԾՕՀ» նշման անհրաժեշտությունը որոշում է այդ փաստաթուղթը կատարողը և ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

16. Արգելվում է «ԾՕՀ» տեղեկության շարքին դասել՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց իրավական կարգավիճակը, ինչպես նաև անձանց իրավունքները և ազատությունները, դրանց իրականացման կարգերը սահմանող իրավական ակտերը,

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի քննարկման և դրանց արդյունքներով որոշումների կայացման կարգերը,

3) սահմանված կարգով քննարկված իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի վերաբերյալ կայացված որոշումները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

4) անձանց իրավունքների, ազատությունների, պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք պահվում են գրադարանների բաց ֆոնդերում կամ կազմակերպությունների բաց տեղեկատվական համակարգերում,

5) բյուջեի կատարման, տնտեսության և բնակչության կարիքների վիճակի մասին տեղեկությունները,

6) մարդկանց անվտանգությանը և առողջությանն սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները,

7) տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, մշակույթի, առևտրի բնագավառներում

տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները,

8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, հանցագործությունների վիճակագրության մասին տեղեկությունները,

9) պետության կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, պաշտոնատար անձանց, կազմակերպություններին տրամադրվող արտոնությունների և սոցիալական երաշխիքների մասին տեղեկությունները:

V. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

17. Համակարգում ներառված «ԾՕՀ» նշումով ցանկացած փաստաթղթի հասանելիության նկատմամբ սահմանափակումներ կարող են կիրառվել մինչև հինգ տարի ժամկետով:

18. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվելու իրավունք ունեցողները ցանկացած ժամանակ Համակարգից կարող են մտից կամ ելից համարներով գտնել միայն իրենց վերաբերելի փաստաթղթերը:

19. Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ «ԾՕՀ» նշումով, սակայն իրեն չվերաբերող փաստաթղթերին Համակարգից օգտվողը կարող է ծանոթանալ միայն համայնքի ղեկավարի կամ քարտուղարի համաձայնությամբ՝ իր կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա:

20. Հինգ տարին լրանալուց հետո «ԾՕՀ» նշումով տեղեկության հասանելիության նկատմամբ սահմանափակումները հանվում են:

21. Համակարգում պահպանված՝ արխիվացված բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում ստեղծված և վերջինիս կողմից վարվող կենտրոնական արխիվ:

22. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում ստեղծված կենտրոնական արխիվում փաստաթղթերը պահպանվում են 10 տարի ժամկետով:

VI. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

23. «ԾՕՀ» նշումով տեղեկությունը չի կարող հրապարակվել (տարածվել) առանց այդ տեղեկությունը պարունակող փաստաթուղթն ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի թույլտվության:

24. «ԾՕՀ» նշումով տեղեկության հրապարակումը տեղեկությունների հրապարակումն է այն անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահվել են ըստ ծառայության, աշխատանքի կամ հայտնի են դարձել այլ ճանապարհով, ինչի հետևանքով դրանք հայտնի են դարձել այլ անձանց:

25. «ԾՕՀ» նշումով տեղեկություններ պարունակող փաստաթղթերի կորուստը փաստաթղթերի վերահսկման կորուստն է (այդ թվում՝ ժամանակավորապես) պատասխանատու անձի տիրապետությունից, որին դրանք վստահվել էին ըստ ծառայության կամ աշխատանքի, և հետևանք է դրանց հետ վարվեցողության ընթացքում սահմանված կարգի խախտման, որի պատճառով այդ փաստաթղթերին դարձել են կամ կարող են իրազեկ դառնալ կողմնակի անձինք:

26. «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման կամ հոսակորուստի դեպքում դրանք հայտնաբերող պաշտոնատար անձը դրա մասին զեկուցում է Գլխավոր քարտուղարին և մարզպետին:

27. «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման հանգամանքները պարզելու նպատակով համայնքի ղեկավարի որոշմամբ կարող է նշանակվել ծառայողական քննություն:

28. «ԾՕՀ» նշումով տեղեկություն հրապարակած անձանց նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ՝ օրենքով սահմանված կարգով:



ԱՇԽԱՏԱՎԱՐՈՒ ԲԱՐՏՈՒՂԱՐ՝

ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

1. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան
2. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Զ. Հարությունյան (պաշտոնի ծածկագիր՝ 2.3-4)
3. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Դ. Մարտիրոսյան (պաշտոնի ծածկագիր՝ 3.1-4)
4. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Ա. Խաչատրյան (պաշտոնի ծածկագիր՝ 3.2-3)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 372-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԻՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 18.01.2023թվականի թիվ 005Ա- որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արենի համայնքի 2023թվականի տարեկան բյուջեի վարչական մասի՝

1. Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի՝ 4221(ներքին գործուղումներ) հոդվածից պակասեցնել 236000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել

ա/ նույն ոլորտի 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածին 100000 ՀՀ դրամ:

բ/ Նախադպրոցական ուսուցում գործառնական դասակարգման 09 բաժնի 01 խմբի 01 դասի՝ 4637(ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին 136000 ՀՀ դրամ:

2. Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի՝ 4267(կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածից պակասեցնել 120000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել նույն ոլորտի 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 373-Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 12.10.2023 թվականի թիվ 123-Ա, 09.11.2023թվականի թիվ 139-Ա և 12.02.2020թվականի թիվ 12 որոշումները, 15.12.2023թվականին Արենիի համայնքապետարանում կայացած աճուրդի 1-3 արձանագրությունները, **որոշում եմ՝**

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.03219 հա (ծածկագիրը՝ 10-008-0018-0013, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, հասցեն՝ ՀՀ ՎՁՄ համայնք Արենի, գ. Արենի 33-րդ փողոց 7/1 հողամաս) բնակավայրերի նշանակության հողամասը 440 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Ալինա Ռոբերտի Մարգարյանին:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.02504 հա (ծածկագիրը՝ 10-008-0184-0103, հողատեսքը՝ այլ) գյուղատնտեսական նշանակության հողամասը 120 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Սեյրան Գագիկի Ստեփանյանին:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.17454 հա (ծածկագիրը՝ 10-008-0126-0002, հողատեսքը՝ վարելահող) գյուղատնտեսական

նշանակության հողամասը 495 600 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Սեյրան Գագիկի Ստեփանյանին:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.20237 հա (ծածկագիրը՝ 10-008-0119-0007, հողատեսքը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 264 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Սեյրան Գագիկի Ստեփանյանին:

5. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.04424 հա (ծածկագիրը՝ 10-012-0011-0029, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, հասցեն՝ ՀՀ ՎՁՄ համայնք Արենի, գ. Արփի Երևանյան խճուղի 57 հողամաս) բնակավայրերի նշանակության հողամասը 636 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Համլետ Էդվարդի Պետրոսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 374-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՆՎԵՐ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ՉՈՐԱՑԱԾ
ԾԱՌԵՐԸ ԵՎ ՃՅՈՒՂԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 16.11.2018թվականի թիվ 109 որոշումը, Արենի համայնքի տարածքում ապօրինի ծառահատումները կանխարգելելու և սանիտարական էությունն ապահովելու նպատակով ստեղծված հանձնաժողովի նիստի 25.12.2023թվականի թիվ 6 արձանագրությունը, **որոշում եմ՝**

1. Թույլատրել Արենի համայնքի Զիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Նվեր Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող հասարակական կառուցապատման հողամասի հարակից տարածքում կատարել չորացած ծառերի և ճյուղերի սանիտարական էությունը:
2. Հատված ծառերի և ճյուղերի խմ-ի համար Արենի համայնքապետարանի 900355105066 հաշվեհամարին վճարել 12 000 ՀՀ դրամ գումար:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Արենի համայնքի Զիվա բնակավայրի վարչական ղեկավար Սեդա Հարությունյանի և աշխատակազմի առաջատար մասնագետ Նվեր Սարգսյանի վրա:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 375-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 25-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021
ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 34 ՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ կետը,

ՈՐՇՈՒՄ ԵՄ՝

Արենի համայնքի ղեկավարի կողմից կառուցապատող <<ԶԻԷՅՋԷՄ-ԱՐՄԵՆԻԱ>> զարգացման հիմնադրամին 25-ը սեպտեմբերի 2021 թվականին տրամադրված թիվ 34 շինարարության թույլտվության մեջ կատարել փոփոխություններ.

որոշման 2-րդ մասի մեջ <<24>> թիվը փոխարինել <<36>> թվով:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdзор@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 376-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԻՐԱԲ ՌՈՒԲԻԿԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,1004ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով
և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող,
Վիրաբ Ռուբիկի Ղարախանյանի սեփականություն հանդիսացող 0,1004հա
բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0056-0048,
գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և բնակելի
տունը վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի, գյուղ Արենի, 11-րդ
փողոց 5 բնակելի տուն՝ նախկինում տրված Արենի, գյուղ Արենի 36-րդ
փողոց 13 բնակելի տուն հասցեի փոխարեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 377-Ա

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԱՐԵՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՈՐԾՈՂ ՀՈԱԿ-ՆԵՐԻ
ԱԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ, ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի պահանջով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Արենիի համայնքապետարանի աշխատակազմի և Արենիի համայնքի ենթակայության
տակ գործող ՀՈԱԿ-ների աշխատակիցներին, ավագանու անդամներին
պարգևատրել շնորհակալագրերով՝ 2023 թվականի ընթացքում կատարած
բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար՝ համաձայն սույն որոշման թիվ 1
հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Արենի համայնքի ղեկավարի

28.12.2023թ. 377-Ա որոշման

ՑԱՆԿ

Արենի համայնքի ղեկավարի կողմից շնոհակալագրերով պարգևատրված անձանց

h/h	Անուն, ազգանուն	գրադեցրած պաշտոն
1	Միեր Ասատրյան	Արենի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
2	Արփինե Միքայելյան	Արենի համայնքապետարանի գլխավոր մասնագետ
3	Զեմֆիրա Հարությունյան	Արենի համայնքապետարանի գլխավոր մասնագետ
4	Սմբատ Սարգսյան	Արենի համայնքապետարանի առաջատար մասնագետ
5	Նորայր Գրիգորյան	Արենի համայնքապետարանի առաջատար մասնագետ
6	Աշոտ Կարապետյան	«Արենի» ՀՈԱԿ-ի տնօրենի օգնական
7	Թորոս Հայրապետյան	«Արենի» ՀՈԱԿ-ի աշխատակից
8	Ղուկաս Եղոյան	«Արենի» ՀՈԱԿ-ի աշխատակից
9	Միհրան Հարությունյան	«Արենի» ՀՈԱԿ-ի աշխատակից
10	Վարդան Մանուկյան	«Արենի» ՀՈԱԿ-ի աշխատակից
11	Խաչիկ Գրիգորյան	Արենի համայնքի ավագանու անդամ
12	Արմենուհի Ծատուրյան	Արենի համայնքի ավագանու անդամ
13	Ռոման Բաղդասարյան	Արենի համայնքի ղեկավարի օգնական Արենի բնակավայրի պատասխանատու
14	Համազասպ Սիմոնյան	Ռինդ բնակավայրի վարչական ղեկավար
15	Արամ Միքայելյան	Աղավաճոր բնակավայրի վարչական ղեկավար

Աշխատակազմի բարոտողար՝



Գ. Սիմոնյան